

ԽՈՐԵՆԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

ՆԱՄԱԿ ՓՐՕՖ. Ն. ԱՌՆՑԻ

Մերիկի Չոպանեան,

Ստացայ նամակդ: Յաւում եմ որ զոնչ ներկայումս ժամանակ չունիմ ցանկացածդ յօդուածը գրելու: Բայց կը յայտնեմ ոտորեւ կարծիքս Ձեզ հետաքրքրող հարցի առթիւ որ- բան կը ներեն նամակի սահմանները:

Հ. Սկիինեան եւ Հ. Հացուներ աշխատում են տարբեր եւ հակառակ ուղղութեամբ եւ չեմ կարծում որ նրանց յառաջ եւ յետ խաղացում- ներից մեծ բան լահէ հայ բանասիրութիւնը: Միանգամայն ապարդիւն գործ է առաջնորդել խորենացիին դէպի Ն. դար: Խորենացին օգտուել է Սեղբեստրոսի եւ Սոկրատի հայ թարգմանու- թիւնից՝ կատարուած 678 եւ 696 թ. եւ ապա ուրեմն ուշ է քան 696 թիւը: Այս փաստ է որի դէմ անդօր են առաքիւթիւնները եւ ընդդիմա- խօսական նկրտումները: Հարցի terminus a quo հաստատուն է մնում է որոշել terminus ad quem — այստեղ է կայանում այսուհետեւ Խորենա- ցու կնճիւղը: Գիտէ՞ք որ ոմանք տրամադիր են քարշել Խորենացին մինչեւ Թ. դարի վերջերը, ինչպէս Մարբուարտ եւ ուրիշները: Նկատի ունենալով Խորենացու հակամաժիկոնեան տը- րամադրութիւնը, որի դէմ ի դուր է վատնում իր պերճախօսութիւնը Հ. Հացուներ, եւ կար- ծում եմ որ Խորենացին գտնուած է ութերորդ դարու խոռոչութիւնների, մասնաւորապէս 775 թուի ապստամբութեան եւ նրա ծանր հետե- աւեքներէի ազդեցութեան տակ, ուստի եւ ա- նրոջունելի եմ համարում Մարբուարտի տե- սութիւնը: Թ. դարում Մամիկոնեանները ի՞նչ եւ անհետացել էին հայ պատմութեան ասպա- րէզից եւ ուրեմն տեղի՞ք չկար նրանց հանդէպ հակառակորդի դիրքը բռնել:

Գալով Մովսէս Կաղանկատուացու խնդրին, ինչ որ Ձեզ առանձնապէս հետաքրքրում է, պէտք է ասել որ Հ. Հացուների տեսակէտը հիմ-

նաւոր չէ: Եւ ահա ինչու: Կաղանկատուացու պատմութիւնը բաղկացած է երեք գրքից եւ ամփոփում է Աղուանքի (Իրապէս Արցախի) անցեալը սկզբէն մինչեւ 950 թուականները: Միխիթարեանները (ինչպէս կը տեսնէք Ջարպ- հանայեանի Հայոց Մատենագրութեան Պատ- մութիւնից) կարծում են որ Կաղանկատուացուն են պատկանում միայն Ա. եւ Բ. գրքերը, իսկ Գ. գիրքը՝ գործ է ուրիշ հեղինակի որ ուշ ժամանակուայ՝ Ժ. դարու՝ մարդ է, այն ինչ Կաղանկատուացին ապրում էր է. դարում: Ի՞նչ հիմ ունի այս կարծիքը, կը հարցնէք: Ըստ ե- րեւոյթին՝ լուրջ: Սակայն Բ. գրքի մէջ յիշ- ուած ամենէն որոշ իրողութիւնը վերաբերում է 685, աւելի ստույգ 678-685 եօթն տարիներին: Այդ այն թուղթն է որ Հոնաց իշխանը ուղղել է Սահակ Չորափորեցի կաթողիկոսին (678- 704) եւ Գրիգոր իշխանին, որ ընկաւ Խաղարաց դէմ կուռելիս 685 թուին: Ուրեմն թուղթը գրուած պիտի լինի 678-685: Այստեղից հետե-ւում է որ Կաղանկատուացին ուշ է քան 678- 685 թիւը: Սակայն Բ. գրքի 14րդ գլխի մէջ, ուր հեղինակը պատմում է թէ ինչպէս Այուա- նից Վիրոյ կաթողիկոսը զնաց Խաղարաց Ծաթ իշխանի բանակը եւ ինչ ընդունելութիւն գտաւ, պատահում է ճանդ տնայաժ գրաւմոցս նոցա» եւ քիչ յետոյ՝ «բարձեալ (զընծայս) ի բաղկաց մերոց» առաջին գէմքով դարձուածը: Այս ա- ոթիթ է տուել Միխիթարեաններին կարծելու որ պատմողը՝ Կաղանկատուացին, ուղեկցել է Վիրոյ կաթողիկոսին, ներկայ եղել ընդունե- լութեան եւ որովհետեւ այցը տեղի է ունեցել 628 թուին, ապա ուրեմն Կաղանկատուացին ապրել է եօթներորդ դարում եւ որպէս այդպի- սին չէր կարող Գ. գրքի հեղինակ համարուել, որ վերաբերում է Թ. րդ եւ Ժ. րդ դարու անց- քերին:

Այս բմբռնումը հիմնովին սխալ եմ համարում: Զարմանայի է որ Հ. Հաջուհի չարունակում է կրկնել ինչ որ Զարպաշտաբան զրեւ է գրեթէ մի դար յառաջ: Նախ, եթէ Կաղանկատուացին 628 թուականին՝ արդէն կաթողիկոսին ուղեկցելու հասակն ունէր, պէտք է պատմեալ ծերունի լինէր 685 թուին յետոյ իր գործը գրելիս: Սակայն կարեւորն այս չէ:

Երկրորդ գրքի 13րդ գլխի շարունակութիւնն է 15րդ գլուխ. «Վասն սաստկացեալ սովոյն եւ դերութեանն ի միասին», որպէս հետեւանք բարբարոսների հրոսակութեան: Եւ այս գլխի վերը պահուած է մի թանկագին յիշատակարան. «Եւ Վիրոյ՝ Աղուանից եւ Լփնաց եւ Զողայ կաթողիկոս՝ թողում ասել դայն ամենայն» եւայլն: Այս յիշատակարանը վկայում է անստորէն որ Վիրոյ կաթողիկոսի այցի նկարագրութեան բուն հեղինակը ինքը Վիրոյ կաթողիկոսն է: Իշխանների եւ ժողովրդի խնդրանքով եւ նրանց ներկայացուցիչ պատուական անձերի առաջնորդութեամբ կաթողիկոսը յանձն է առել գնալ ողորդելու բռնաւոր Շաթ իշխանի սիրտը եւ ազատելու գերիներին: Յաջող առաքելութիւնից յետոյ Վիրոյ գրել է իր ճանապարհորդութեան պատմութիւնը, թերեւս կցած որ եւ է ձեռագրի որպէս յիշատակարան, եւ Կաղանկատուացին առել եւ գրել է իր գործի մէջ: Վիրոյ պատմել է առաջին դէմքով, եւ Կաղանկատուացին փոխել է երրորդ դէմքի, միայն մի տեղ թողել է բռնագրի «անդ տեսաք», որովհետեւ իսկապէս անյայրիք էր գրել՝ «անդ տեսան», քանի որ նկարարւում է թէ ինչպէս վարչերի մեծամեծները Շահ իշխանի՝ ոչ թէ մարգալարի նստած էին, այլ ուղարի նման չղաղծ իրենց տիրոջ առջ: «Ո՛ր բազկաց մերոց» էր նշանակում որ Կաղանկատուացին եւս իր բազկիները վերայ ունէր բնծաներ Շաթին ներկայացնելու համար: Մի քանի սող ստորեւ ասում է «Եւ փոխեալ ի լոցանէ՛ զօժիտն ի բաղուկս իւրեանց», այսինքն Շաթի մարդիկ Վիրոյի ուղեկիցների բաղուկները փորագրեցին բնծաները իրենց բաղուկների վերայ: «Ո՛ր բազկաց մերոց» նշանակում է ի բազկաց «մերայնոց», «մերիններու բաղուկներէն», ինչպէս ասում են արեւմտահայք, եւ

«մերոնց (մերոց) բաղուկներէն»՝ արեւելահայք: Այսպէս զեղոս եւս գործ է ասում յաճախ «մերոց», «մերայնոց» իմաստով, որից և «մերոնց» արդի գործածութիւնը: Կաղանկատուացու գործը մի ժողովածու է, ուր հաւաքել է ինչ որ գտել է իր ժամանակուան մատենագրութեան մէջ եւ հաւանօրէն Աղուանից կաթողիկոսարանում, Աղուանքի վերաբերեալ: Երբեմն պահել է հին հեղինակների անունները: Այսպէս՝ նոյնի. գրքի մէջ, գլ. 2. «Տեսիլ Վեհիկ», կայ վերջը՝ յիշատակարան. «Եւ Ագրիանէ որ յիշատակարանս զրեցի», մաղթեմ յիշել եւայլն: Նոյն գրքի գլ. 1. վերջ՝ յիշում է. «Զնդ որս եւ իսկ Յովէլ նուստս եպիսկոպոս»: Երկրորդ գրքի կարեւորագոյն էջերից է Խարայէլի քարոզական առաքելութիւնը Խաղբաց մօտ, եւ այս էջերի հեղինակը նոյն ինքն Խարայէլն է: Կան մի շարք վաւերական պաշտօնական թղթեր եւ ժողովական կանոններ, առնուած կանոնագրքերից եւայլն: Առաջին գրքի մեծագոյն մասը բռնում են վկայաբանական անվասեր հատումներ եւ մի մասը քաղուածներ են Խորենացուց, Եղիշէից եւ Ապաթանգեղոսից: Վերջինս ոճաբանական ազդեցութիւնը երեւում է եւ երկրորդ գրքում:

Կաղանկատուացու երեք գրքերը կազմում են մի գործ եւ պատկանում են մի հեղինակի, որի գլխաւոր ջանքն է եղել հաւաքել ցան եւ ցրել նիւթերը անցեալից հասած. իր գրչին է պատկանում թերեւս Գ.րդ գրքի 19րդ գլխից սկսած մինչեւ վերջ՝ «Որ ինչ յերկրիւր թուականութեանն Հայոց եւ այսր գործը լեալ ի սահմանս Աղուանից»:

Մովսէս Կաղանկատուացին կազմել է իր Պատմութիւնը գրեթէ նոյն ժամանակ ինչ Յովհաննէս կաթողիկոս եւ Թովմա Արծրունի, Ժ.րդ դարի առաջին կէսին, այսպէս ասած՝ հատուածական կամ տեղական հայրենասիրութեան շրջանին. Յովհ. կաթողիկոս գրել է Բաղրատունիների պատմութիւնը, Թովմա՝ Արծրունիների, Կաղանկատուացին՝ նրանց հետեւելով՝ Աղուանից կամ Արցախի իշխանների: Մերձաւոր տաիթն է հաւանօրէն Աղուանից իշխանի՝ Սահակ Սեւադայ զօրաւոր իշխանի՝

իր որդու Գրիգորի հետ ճակատելը Սմբատ եւ Աշոտ Երկաթի զէմ՝ եւ կարողանալը պաշտպանել իր անկախութիւնը, եւ Գրիգորի որդուն՝ Սեւադայ Բ. իշխանիկի արքայական թաղ կապելը, թերեւս այս առթիւ, կամ վերջնիս որդւոյն Յովհաննէս Սենեքերիմի, զորո ընտրեաց աջ բարձրիւթյն կոչելով ի թագաւորութիւն», կոչմանն ընդունուիլը հարեւան պետութիւններէց: Այս առիթներով է որ նա գրում է իր նախնիքների պատմութիւնը, յառաջ քան 949 թիւը: Առաջին անգամ յիշատակում է Աղուանից Պատմութիւնը 949 թուականին, եւ յիշատակողը՝ Անանիա Մոկացի կաթողիկոսն է (943 – 965) որ երկիցս 949 եւ 958 (աւելի ստույգ 956) անձամբ դնաց Աղուանք եկեղեցական տաճարայնութիւնները յարգարեւու եւ այս առթիւ յիշում է Մովսէս Կաղանկատուացին եւ վկայութիւն բերում Գ. գրքից:

Կարծեմ՝ կարողացայ միտքս ամփոփել, առանց բանասիրական մանրամասնութեան մէջ մտնելու: Երրորդ գիրքը եւ մինչեւ անգամ վերջին դուիւր՝ Աղուանից կաթողիկոսների ցանկը (բաց ի թերեւս մի քանի յետոյ աւելցած անունների) առաջին երկու գրքերի հետ միասին Մովսէս Կաղանկատուացու խմբագրածու գործն է: Ցանկի յառաջաբանը յար եւ նման է Ա. գրքի ճրգ գլխի յառաջաբանին: Այստեղ հեղինակը գրում է՝ «յոյժ ցանկալի էր ըստ կարգաց դիտել զպատմածս որ ինչ յԱռանայ նախազանութենէն ցայսօր դործք, բայց արեւելեացս բազմազգութիւն ամբոյնաց յուրպէս եւ կտակարանացն երկիզուութիւն»... Համեմատել Ցանկի հետեւեալ սկզբածքի հետ.

«Սակս հայրապետական անուանց (ե՛ւ ոչ անուանդ, ինչպէս տպուած է) պարտ եւ պաշտոն վարկանելի էր զստույգն գործելի ի գրի, բայց զի յիսկզբանմն հաղպկեան եւ նախաշաւիդ առաջնորդաց դործք եւ ժամանակք եւ անուանք իրկէզ եղեպա յանօրինաց» եւայլն:

Այս բոլորէն հետեւում է որ Մովսէս Կաղանկատուացին է. դարու հեղինակ չլինելով չի կարող որեւէ փաստ ծաայել, որեւէ հիմտալ ի նպատաւ Մովսէս Խորենացու խնդրին:

Ապա ուրեմն Հ. Հացունու փաստարկութիւնը սխալ է:

Ընդունի՛ր ողջոյն եւ յարգանքս:

Ն. ԱՒՈՆՑ

Յ. Գ. — Մոռացայ յիշել (թէ եւ կրկնում եմ բանասիրական եւ լեզուական կողմը չեմ շօշափում), որ Զարպհանէյեան լեզուի եւ ոճի տարբերութիւն է գտնում Ա. եւ Բ. գրքերի եւ Գ. միջեւ, որի համար եւ տարբեր հեղինակների դործ է համարել: Առ այս պէտք է ասել, որ ոճի եւ լեզուի տարբերութիւն կայ ոչ միայն գրքից գիրք այլ յօդուածից յօդուած, եւ տարբերութիւնը ծագում է սրանից, որ նիւթերը տարբեր ժամանակների, այլ եւ այլ գրիչների գործեր են եւ Մ. Կաղանկատուացին, որպէս միջակ գրող, հետամուտ անգամ չի եղել մի ոճի վերածել, ինչպէս Մ. Խորենացին է արել. այլ հաւատարմութեամբ ընդօրինակել է ինչպէս կայ, յապաւումներով եւ անտեսելով յաճախ նոյն իսկ ժամանագրական կարգը: